

## Լ Ր Տ Ե Ս Օ Ր Ի Ո Ր Դ

Սառնաշունչ պարզէկ գիշեր էր: Կապուտակ և ծիրանի գոյներով զարդարուած երկնքի երեսին լուսինը, ինչպէս մի արծաթեայ գունտ, Արրաս բաղաքի հրապարակների ու նեղ փողոցների վերայ ցերեկուայ նման լոյս էր արձակում և հանդէս էր բերում հրապարակների վերայ և նրանց անկիւններում խոնուած մարդկանց երեսների անհանգստութիւնը: Նրանք բննադատում էին գերմանացւոց նախագծած անխուսափելի ու մրակոծութիւնը:

Բայց, բացի պատերազմի մասին խօսողներից, այդ գիշերը կային Արրասում և այլ անձինք, որոնք, ինչպէս երկում էր, շատ չէին զբաղուած պատերազմի խառնաշփոթութիւններով: Մի մեծ ծառի հովանու տակ, բաղաքի շըրջակայքում գտնուող հազճէպ և ժամանակաւոր պատրաստած անշուք մի շինութեան մօտ կանգնած էին մի երիտասարդ և մի կին ու տաք տաք խօսում իրար հետ:

Երկուսն էլ երիտասարդ էին, երկուսն էլ հրաշալի գեղեցկութեան տէր, նոցանից Վիկաոր դը Վիլարը իւր բարձր հասակով, լայն թիկունքներով, ամուր կազմուածքով, ազնիւդէմքով օժտուած և ֆրանսիական սպայի նշանագետստով զարդարուած հիացնում էր անցորդներին. այն ինչ նրա ընկերուհին, չնայելով իւր հասարակ սպիտակ հանդերձին, լայն ծածկոցին և փոքրիկ գլխարկին, կարող էր իւրաքանչիւրի ուշադրութիւնը իւր վերայ դարձնել:

«Ի՞նչո՞ւ ձեր դէմքը այդքան տխուր է, Անտուանէտ»,

Հարցրեց Ակատոր դը Վիլլարը, գուցէ մի բան վշտացրել է ձեզ: Ես ոչինչ էի համարում կեանքը, դուք սովորցրիք ինձ, ասաց նա, զգալ նրա բաղցրութիւնը և ես օրհնում եմ բոլոր սրտով պյն մահացու վերքը, որ ենթարկեց ինձ ձեր հոգատարութեանը: Բայց և պյնպէս, ես չեմ կարողանում հասկանալ ձեզ, Անտուանէտ:

Անտուանէտը փոքր ինչ հիսամթափուեց, երբ Ակատորի շրթունքները արտասանեցին վերջին խօսքերը և նա ձեռքը բարձրացրեց նրա մերանը փակելու, բայց մի միտք կաթափեցրեց նրան, նա իջեցրեց իւր ձեռքը և մի տեսական դող ցնցեց նրա մարմինը:

«Ա՞խ, երանի՛ թէ հաւատ չընծայէիք ինձ, շաց նա խեղառուած ձայնով և նախ բան Ակատորը կրացագաւ լու, «Անտուանէտ», վերջինս անհետացաւ:

Երիտասարդը մի քանի րոպէ կանգնած մաց ձեռքերը կցած: Նա նայում էր դէպի առաջ և ըստ երկոյթին ոչինչ չէր տեսնում, բացի օրիորդի պյնքան-խորը և թափանցիկ հայեացքից, նորա տիրալի և մտատանջ փայլուն մոխրագոյն աչերից: Անտուանէտի խօսքերը զարմացրին և տիրեցրին երիտասարդին:

Արդէն մի բանի ամիս էր, ինչ Ակատոր դը Վիլլարը ճանաչում էր այս օրիորդին, որ զօրապետ Լաժեօնի զօրքի մէջն էր և հէնց պատերազմի սկզբից ցոյց տուեց իրան գթառատ և հարազատ հիւանդապահ: Երբէք նա չէր դլանում ծառայել ֆրանսիայի թշնամիներին, երբ նրանք ենթարկելում էին իւր հոգատարութեան. վարւում էր նրանց հետ իսկապէս նոյնչափ մեղմութեամբ և կարեկցութեամբ, որքան և վիրաւորուած ֆրանսիայի զինուորների հետ:

«Եթէ ես պէտք է կորցնեմ նրան», շշնչում էր երիտասարդ սպան, երբ լուռ ու մունջ հեռանում էր հիւանդանոցից, «աւելի լաւ է միջոց տամ անպիտան գերմանացիներին շուտով ազատել ինձ իմ տանջանքներից» և նա

այդ օրուայ նշանը տալով հիւսիսային պարիսպների մօտ գանուղ պահապան զինուորին, շտապով հեռացաւ դէպի իւր բնակարանը։

Բայց յանկարծ նա փոխեց իւր ճանապարհը և գնաց ուրիշ ուղղութեամբ, նա մտածեց թէ կարելի է անկողին մտնելուց առաջ յաջողուի տեսնել զօրապետին։

Երբ Վիկտորը ներս մտաւ, զօրապետ Լաժեօնը բննում էր մի քանի թղթեր և նրա կերպարանքը անհանգստութեան նշան էր կը ուղարկ, բայց երբ երիտասարդը նստեց նրա մօտ, զօրապետը նրա վերայ նայեց մի ուրախալի ժպիտով։

Վիկտորի զարմանալի նմանութիւնը զօրապետի մի որդուն, որ սպանուած էր պատերազմի մէջ, ծերունու աչքին շատ սիրելի էր անում Վիկտորին, զօրապետը նրա հետ վարւում էր անփոփոխ բարութեամբ ու յարգանքով և բարձրացրեց նրան իւր զօրախմբի մէջ ամենանշանաւոր դիրքի։

«Ոչինչ տիսուր բան հօ չկայ, զօրապետա»։

«Ոչինչ, այնուամենայնիւ մի երկիւղալի զգացմունք ճընշում է ինձ։ Որքան փորձում եմ, չեմ կարող իսպառ հեռացնել նրան։ Ի դէպ, դը-Վիլլար, լաւ կը լինէր, որ ինձ տայիր մեր ամրութիւնների մակարդակը, ուղղում եմ պահել մես թղթերի հետ։ Յոյս ունիմ, որ ուղղած կլինէր իմ ցուցման համեմատա»։

«Ես, ասաց Վիկտորը, հանելով մի ծալած թուղթ գրպանից։ Ես կարծում եմ, որ մի փոքր աւելի պարզ ձև տուի, քան թէ սա ունէր սկզբում, այժմ կարծեմ կ'ըմբռնէք նկարը մի հայեցքով»։

«Մեր հիւսիսային ամրութիւնները յայտնի են միայն ձեզ և ինձ, ասաց զօրապետը, «Ենթադրենք թէ՝ թշնամին իմանայ այդ բանը, եթէ նա կենդրոնացնէ իւր սմբերը պսդ կողմը, նրան երկար դիմադրելու յոյս չենք կարող ունենալ»։

Երիտասարդ սպան կարմրեց զօրապետի խօսքերից, յիշելով, որ ինքը յայտնել է Անտուանէտին այդ գաղանիքը»։

Թէ ինչպէս պատահեց այդ՝ չեր յիշում, բայց փաստը մը-  
նում էր փաստ, որ նա յայտնել էր հիւանդապահին ամ-  
րութիւնների այն թոյլ կողմերի դիրքը, որոնցից այնքան  
երկիւղ էր կրում զօրապետը։ Բայց ինչ նշանակութիւն ու-  
նի այդ բանը։ Թիթէ Անտուանէաը հաւատարիմ չէ։ Միթէ  
նա չէ զօհել իւր երիտասարդութիւնը և ոյժը ֆրանսիային։  
Նա ասել էր օրիորդին, որ հաւատում է նրան լիովին և  
անսահման և թէ ցանկանում է, որ այդ վարկը ընդմիշտ  
հաստատ մնայ:

Բայց և այնպէս նրա ձայնը մի փոքր դողդողաց, երբ  
ասաց. «Նրանք ի հարկէ ի վերջոյ յաղթող կը լինին, բայց  
ես չեմ ուզում ձեր անհանգստութեանը մասնակից լինել,  
զօրապետ։ Ես չեմ կարծում, որ նրանք իմանան մեր գաղ-  
տնիքը։ Զօրապետը գլուխը շարժեց և հոգոց հանեց։ Երի-  
տասարդի խօսքերը ուրախաղըին, բայց չհամոզեցին նորան։  
Նա չեր կարող ազատել իրան իւր սրտի վերայ տիրող ծան-  
րութիւնից։ և երբ նա բարի գիշեր ցանկացաւ Վեկաորին,  
վերջինս մտածեց, որ իրանք կրկին կարող են իրար հանդի-  
պել պատերազմի կրակի մէջ։

Վեկաորը անկողին մտաւ, բայց չեր կարողանում քնել,  
Անտուանէաի վերջին խօսքերը հնչում էին նրա ականջին, հան-  
գստութիւն չէին տալիս նրան և փախցնում էին նրա քու-  
նը։ Նա շուռ ու մոռու էր գալիս անդադար, 'ի զուր աշ-  
խատելով մեկնել օրիորդի վերջին խօսքերը և ցաւում էր,  
որ հետեւեալ երեկոյեան անկարելի պէտք է լինի նրան  
տեսնել։

Եթէ Վեկաորը գուշակելու մի փոքր ընդունակութիւն  
ունենար, օրիորդին այդ ժամանակ կտեսնէր հիւանդանոցի մի  
փոքր սենեակի մէջ ծնկաչոք ընկած անկողնի վերայ, որ չէր  
աշխատում ճնշել իւր կրծքի մէջ ալեկոծուող, իրար հակա-  
սող զգացմունքները և գուցէ աւելի խորը վիրաւորուած և  
վշտացած զգար իրան, բայց օրիորդի զերմ արտասուբը ան-

զուսպ և գրեթե անկապ մրմունջը կը տային նրան մի բանալի պյն գաղանիքին, որ պէտք է գնուուր սարսափելի գնով։ Առաւօտը լուսացաւ մշուշով և սառնաշունչ հողմով։ Քաղաքի փողոցները, շուկաները և սրճարանները լցուած էին աղամարդկանցով և կանանցով, նրանք խօսում, դասում և վիճում էին։ Դ միջի այլրոց նրանք բոլորերեան մի սասատիկ ատելութիւն էին զգում դէպի գերմանացիք և յսուունէին, որ նրանք գերի կ'ընկնեն Երրացիների ձեռքը։ Վիկոտոր դը-Ակլլարի բարձր հասակը յաճախ երևում էր փողոցներում։ Նա ունէր փաղաքշական, ուրախացնող խօսք մէկի համար, մի դուրեկան ողղոյն կամ ժպիտ ուրիշների համար և շատ օրիորդներ ժպտում և կարմրում էին նրա պարզ հայեացքին հանդիպելիս։ Բայց Վիկտորի միտքը զբաղուած էր միայն Անտուանէտով և նա անհամբեր տենչանքով սպասում էր իւր ծառայական պարտաւորութիւնների վերջանալու ժամին, որ կարողանայ կրկին տեսնել նրան։

Բայց վերջապէս, երբ հասաւ այդ ժամը, Անտուանէտ խուսափում էր նրա տեսակցութիւնից։ «Միջոց չունիմ, Վիկտոր, ասաց նա, ես պէտք է իմ վիրաւորուածներին այցելեմ և ինձ ՚ի զուր մի սպասէք», նրա ձայնը կտրուեց և խեղդուեց կոկորդի մէջ։

«Անտուանէտ, ի՞նչ էր ուզում ասել, բացագանչեց Երիտասարդ սպան, ես չեմ հասկանում ձեր վարմունքը։ Կարելի է կարծել, թէ ես ձեր թշնամին եմ։»

Օրիորդի կերպարանքը փոխուեցաւ նկատելի կերպով, նրա երեսը սաստիկ գունաթափուեց։

«Թշնամին, կրկնեց նա մի տկար ժպիտով, կարո՞ղ էք դուք երբ և իցէ իմ թշնամին լինել, Վիկտոր։

«Ի՞նչո՞ւ էք այդ հարցը ինձ տալիս, ես կարծեմ ապացուցել եմ, որ ձեր բարեկամն եմ և ամենալաւ բարեկամը։ ԱԱյս, ապացուցել էք այդ, մրմնջաց նա, աչքերը իոնարհելով։ Ո՞ղջ եղէք», ասաց օրիորդը հեկեկանքից կտրուող,

ցածր, լարուած ձայնով, «Ողջ եղէք և ինչ էլ պատահի, ինչ էլ որ դուք մտածելու լինիք իմ մասին, սիշեցէք այնուամենայնիւ, որ դա իմ հայրենիքիս պահանջն էր...» Ռ'հ, ինչ եմ ասում: Ես վաղը կը բացատրեմ ամեն բան: Հիմայ չեմ կարող, ժամանակ չունիմ գործի մասին խօսելու: Գնացէք այժմ, Վիկտոր, վաղը ամեն ինչ կիմանաբ:

«Նա ներս մտաւ հանդէպի դռնով և կանգնեց դրան ետևը դիտելու, մինչդեռ Վիկտորը հեռացաւ շտապով և շատ լաւ արեց, որ նա չը նկատեց օրիորդի երեսի վերայ պյն սարսափը, կամ չըլսեց այն յուսահատական ձիչը, որ դուրս թռաւ օրիորդի շըմունքներից, երբ Վիկտորը անհետացաւ նրա աչքից:

Քաղաքը շօջապատող գերմանացւոց կողմից այդ օրը յարձակումն չեղաւ, բայց երբ մութն ու ամպամած գլշերը վրայ հասաւ, զօրապետ Լաժեօնի սիրալ ճնշում էր մի անորոշ վտանգի նախաղգացումով, որ միայն օրուան զբաղմունքները թեթևացնում էին, թէպէտ Վիկտորը կրկն և կրկն փորձում էր նրան հաւատացնել, թէ նրա երկիւղը անհիմ է:

«Ես պարտաւոր եմ մի խոստովանութիւն անել ձեզ, զօրապետ, մի մտերմական րոպէին, որ ես չեմ փորձի արդարացնել հիւանդների հոգատար Անտուանէտին յայտնել եմ մեր հիւսիսային ամրութիւնների թուլութեանց մասին:»  
«Յայտնե՞լ էք, բացադանչեց զօրապետը, ի՞նչպէս, ի՞նչպէս պատահեց այդ:»

«Հազիւ թէ կարող եմ յիշել, պատասխանեց Վիկտորը, միայն գաղտնիքը դուրս է թռել իմ բերանից, բայց և պյնպէս անհանգստանալու պատճառ չկայ, ես Անտուանէտի վերայ նղնքան վստահ եմ, որբան ինձ վերայ:»

«Մի փոքր վաղ է դեռ ասաց զօրապետը. դառը ժըպիտը և այնու ամենայնիւ ես յոյս ունիմ, որ ձեր անզգուշ հաւատընծայութիւնը վատ հետևանք չի ունենալ և ես բոլորովին համաձայն եմ ձեզ հետ, որ Անտուանէտը ար-

ժանի է, որ նորան հաւատ ընծայեն: Նա հազարների մէջ աւքի ընկնող մի կին է, և մեր խեղճ զինուորների մեծագոյն մասը իւրեանց կեանքով նորա հոգաւարութեանն են պարատական: Բայց ես ենթադրում եմ, ես յոյս ունեմ, որ այլ ևս ուրիշի չեք յայտնած պյու գաղտնիքը:

«Բոլորովին ձիշտ է, պատասխանեց Վիկտորը և Խընդ-րում եմ ներողամտութեամբ ընդունել պյու իմ խոստովանութիւնը:»

«Այսպէս թէ պյնպէս, ձեղ ինձանից պակաս սիրող մի ուրիշ զօրապետ շատ թանգ կարող էր նստեցնել պյու վարձումբը, ասաց ծերունին, բայց դուք գրեթէ իմ որդիս էք, Վիկտոր:»

Նրանք երկար ժամեր խօսակցում էին, առանց ուշք դարձնելու Անտուանէտի վերայ, որը դանդաղ քայլերով շարժում էր հիւանդանոցի սենեակների մէջ, կարեկցելով վերաւորուածներին, մսիթարելով մեռնողներին և անհանդատութիւնով ականջ էր դնում պյն ձայնին, որ, ինչպէս գիտէր, լուսաբացին պէտք է արձակուէր երկիւղով լցուած հորիզոնի վերայ: Ուումբերի դղոդիւնը, նրանց պայմոցը և ոմբակոծութեան սարսափելի մեքենայգործութիւնը պէտք է ուղղուէին պյն տեղի վերայ, ուր արդէն անհնար էր դիմադրութիւն անել հիւսիսային ամրութիւնների վերայ: Եւ այդ սկսուեց վերջապէս դրսից լսելի եղաւ մեծ աղմուկ, թմբուկների ձայն և հրաւէր դէպի զէնք. փողոցները լցուած էին զինուորներով, կանայք և երեխաներ գոռալով, կոծելով, սարսափահար խելագարների նման վազվզում էին պահով աեղ գտնելու: Բոլորեքեան վրդովուած և զարհուած էին:

Ցանկալով աւելի բան իմանալ, բան պյու հնարաւոր էր հիւանդանոցի լուսամուտներից, Անտուանէտը փաթաթուեց շալի մէջ և դուրս ելաւ, բայց հազիւ թէ մի միոքը առաջ էր գնացել, երբ իւր անունը լսեց մի հեծելալազօրից, ա-

մայացած փողոցներից մէկի մէջ նա յետ դարձաւ և նրա արիւնը սառեց երակներում, երբ աեսաւ Ակատոր դը-Ակա-լարին:

«Դուք երկիւղի մէ՞ջ էք, ասաց նա ձիուց ցած իշնելով և օրիորդին մօտենալով, այդ ինձ չէ զարմացնում, գերմանացոց կողմից սա մի զարհուրելի պարգև էք մեզ: Դուք ուր էք գնում: Ես պէտք է ձեզ ասէի, որ ինչքան կարելի լինի հիւանդանոցի մէջ մնաք: Դա ամենաապահով աեղն է ձեզ համար:»

«Սա նոր բան չէ ձեզ համար, Ակատոր դը-Ակալար, ասաց օրիորդը մի հաստատ սառը ձայնով, Միթէ չէք հասկանում, թէ ում էք պարտական այս անսպասելի ուրակոծութեան համար: Դուք դեռ հաւատում էք ինձ, վստա՞չ էք լիովին ինձ վերայ և ձեր սրտում տատանման տեղիք չեայ: Այժմ թոյլ տուէք ինձ հանել դիմակս, որ կրում էի սյուբան ծանր ամիսներ և ներկայանալ իմ իսկական դէմքով, իբրև մի գերմանական լրտես:

«Անկարելի է, գոչեց Ակատորը երկիւղած ձայնով, Անտուանէտ, դուք չգիտէք թէ ինչ էք սառմ: Դուք լրտես, գերմանական լրտես ա:

«Եյո՛, պատասխանեց նա մի մռայլ, ատելութեան ձայնով և նրա գեղեցիկ երեսը բոլորովին կերպարանափոխութեցաւ: Մի շաբաթ առաջ արդէն ես յանձնեցի Արրասը հայրենակիցներիս ձեռքը: Կարո՞ղ էք այժմ ասել, Ակատոր դը-Ակալար, որ ձեր սիրաը գէպի ինձ չէ փոխւում: Կան վայրկեաններ, երբ կեանքը սլանում է արագ բայլերով և երբ տարիների տանջանքները, կարծես, հաւաքւում են մի վայրկեանի մէջ և մեզ թւում է, թէ արիւնը դուրս է հոսում մեր սրտից կաթիլ առ կաթիլ: Այդպիսի մի վայրկեան էք երիտասարդ սպայի համար, երբ նա կանգնած էր՝ իրան մատնող այդ կնոջ առաջ:

«Եւ դուք երբէք չէ՞ք սիրիլ ինձ:

Այդ խօսքերը արտասանուեցին այնքան ցածր և խեղ-  
տուած ձայնով, որ ոչ ոք մինչև այժմ չէր լսել Վիկտոր-  
դը-Վիլլարի բերանից:

Օրիորդը պատասխան չտուեց, բայց նրա դէմքը ձիւնի  
նման սպիտակ գոյն ստացաւ և վզին մօտ շալը բռնած ձեռ-  
քը այն աստիճան դողդողում էր, որ շալը ձեռքից դուրս  
պըծաւ:

«Ես ձեզ հաւատում եմ, կսիրեմ ձեզ՝ ի պատիւ այն-  
տեղեկութեան, որ դուք կարողացաք իմանալ ինձանից, մի-  
տեղեկութիւն, որ ձեր բարեկամութեան գինն էր ուրեմն,  
շարունակեց Վիկտորը հաստատ ձայնով, «Եւ դուք, Անտուա-  
նէտ, մատնեցի՞ք ինձա:

Եւ առանց այլ ևս նայելու օրիորդի գեղեցիկ դէմքին՝  
նա հասկացաւ իւր կորուսար, շտապ նստեց իւր ձին և  
հեռացաւ:

Անտուանէտը վերադարձաւ հիւանդանոց. երբ ներս-  
գնաց իւր սենեկը՝ նա յետ դրեց դուռը և փակեց:

«Իմ հայրենի՞ք, իմ առաջին հայրենի՞ք, շշնչում էր  
նա. «Հայրենիք ամեն բանից առաջ, բայց երբ այդ խօսք-  
ը դուրս էին թռչում շրթունքներից՝ նա ցնցուեց և մեղմ-  
ճիչ արձակելով անզգայ փոռուեցաւ յատակի վրայ:

Գերմանացիք յարձակուեցին ֆրանսիական բաղաքի վե-  
րսչ: Տիրեց մի խստասիրտ և կատաղի պատերազմ, բայց  
ուր որ նա աւելի կատաղի էր մղւում, այնտեղ ամենից ա-  
ռաջ անցած գտնւում էր երիտասարդ Վիկտոր դը-Վիլլարը.  
Նա մահ էր խնդրում, բայց չէր գտնում Դեռ վեցերորդ-  
օրը նա ձի հեծած իւր զօրախմբի զլուկն էր կանգնած և  
ոգևորում էր նրան:

«Քաջացէք, բաջացէք», գոչում էր նա: Կէս օրից յե-  
տոյ նա տեսաւ, որ զօրբը նկատելի կերպով թուլանում էր:  
«Հերոսների նման հանդիպեցէք թշնամուն, որդիք, կեցցէ-  
ֆրանսիան»:

Բայց ուշ էր արդեն: Ամրութիւնները վերջապէս թուլացան և գերմանացիք իբրև նուռաճող վասակ կանգնեցին նրանց առաջ: Սարսափ աիրեց ֆրանսիացւոց սրտին և գերմանացիք պարծանքով տիրեցին քաղաքին: Շատերը կարողացան փախչել այնտեղից, նրանց մէջ էր և զօրապետը իւր աւագամասն զօրականների հետ ։ Նա բաղտ ունեցաւ միանալ գլխաւոր զօրքերին և կորուսած հանդերձներն ու զէնքերը լրացնել:

Այսբան մատաղահայս, այսբան գեղեցիկ և այսպիսի մահ և ինչ մահ, մի մատնիչի, մի լրտեսի մահ:

Անտուանէտը արտասուազուրկ, սառնասիրա և հաստատակամ էր, պատերազմի յաջողութիւնները նրան նորից Փրանսիացւոց բանակի մէջ էին գցել: Զօրապետ Լանժեօնը աշօթում էր շարունակ, որ նա ընկնի իւր ձեռքը և մասդ նստեցնէ օրիորդին Արրասը իւր հայրենակցաց ձեռքը մատնելը: Նրա այդ ցանկութիւնը կատարուեց մի ամիս սպասելուց յետոյւ: Գերմանացւոց զօրքի մի յանկարծակի յարձակումը պսակուեց նրանով, որ Փրանսիացւոց ձեռքն ընկան նրանց դրօշակի դէմ պատերազմողներից տաս տասերկու գերիներ և սպանուածներ, դոցա շարքում և հիւանդների հոգատար Անտուանէտը:

Նրա վատ յանցանքը կարող էր ներուիլ միսյն կին լինելու պատճառով, բայց այս գեպքում ներուղամտութեան մասին խօսք չէր կարող լինել: Մինչև կէս գիշեր օրիորդը պէտք է պատրաստուէր մեռնելու: Նա ներումն չէր խնդրում, նա բաւական գոռող էր, չէր կամենում կեանք հայցել իւր թշնամիներից, մռայլուած զօրապետից և նրա աստիճանաւորներից, բացի մի անձից, որ բացակայ էր: Նա լսեց մահուան վճիռը առանց մի խօսք արտասանելու: Վրանի մէջ նա միայնակ էր և կաշկանդուած, կարծես, մռացել էին նրան և Աստուած եւ մարդիկ: Նրան լսելի էր այն զինուորների ուսերի տոփիւնը, որոնք շրջում էին նրա բանտի առաջ, նրա փախուստը արգելելու համար:

Մահուան կսկիծը և այն էլ այդպիսի անպատռաբեր, սարսափելի մահուան, արդեօք մի բոպէ գարհուրեցրեց նը-րան. դժուար էր ասել:

Օրիորդը կանգնած էր անշարժ, անխօս, կորագլուխ և ձեռքերը կրծքի վերայ ծալած. նրա երկար ոսկեգոյն մա-զերը բողի նման փոռւել էին նրա երեսի և ուսերի վերայ:

Դրան մի շարժումը հանեց նրան մտատանջութիւնից, նա սպասում էր տեսնել կոպիտ զինուորներ, որոնք գուցե ուղեկցելու էին նրան դեպի կառավինատեղը, բայց դրա փո-խարէն մոմի աղօտ լուսի տակ նա տեսաւ վրանի մէջ նրան, որի սէրը նա մատնել էր՝ այն է Արկտոր դը-Ակլարին:

«Անտուանէտ»

Նա չպատասխանեց, գուցէ չէր կարող Բայց նրա շըթունքները դողդողացին, նա բարձրացրեց մի կարճ ժա-մուայ մէջ գունաթափուած երեսը աղաչանքի արտայայտու-թիւնով:

«Անտուանէտ, ասաց Արկտորը, ես եկել եմ ձեզ ա-զատելու, չպէտք է ժամանակ կորցնել, ես կաշառել եմ պա-հապաններին և իմ ձին պատրաստել ձեզ համար: Մի ժա-մից յետ դուք ձեր բարեկամների մօտ կը լինիք!»

«Իսկ դուք, հարցրեց նա:

«Ինձ համար մի մտածէք, պատասխանեց Արկտորը ու-րախ ձայնով, ես կազատուեմ: Իսկ այժմ գնացէք, սիրելիս և աղատեցէք ձեր կեանքը!»

Այս որ ասաց՝ նա բաշ տուեց օրիորդին դեպի վրանի դուռը, փաթաթեց նրան իւր վերաբերուով, դըք նրա գըլ խին մի գլխարկ և մինչև անգամ ծիծաղում էր, որ օրիորդը նման է Փրանսիական զինուորի: Մի շերմագին հրաժեշտ և նրանք բաժանուեցան յաւիտեան:

Մի ժամից յետ, երբ պահապանները եկան լրտես օրիոր-դին կառավինատեղը տանելու, ուր մի խումբ զինուորներ և զօրտպետը իւր պահակ մասնախմբի հետ սպասում էին ար-

դեն դատապարտուածին, նրանք աեսան վրանի պահապան զինուորներին, իսկ վրանի մէջ Վիկտոր դը-Վիլլարին:

Թմբուկները հարին, շտապով լուսնի, բանակի մէջ վառուող խարոյկների և զինուորների բռնած կերոնների լսոի տակ կազմուեց մի զինուորական դատ, որ Վիկտոր դը-Վիլլարին մահուան դատապարտեց:

Նա չէր խնդրում ներում, չէր խնդրում ողորմածութիւն: Այլ հանդարտ և լուռ ընթացաւ դէպի կառափնատեղը և ոչ մի խօսք չ'արտասանեց, երբ կապում էին նրա աչքերը, շղթայում ձեռքերը: Երբ նրա դէմը կանգնեց հը-րացաններով զինուած մի զօրախումբ՝ նա կարծես չէր էլ զգում նրա ներկայութիւնը:

Տիրեց մի անշունչ լուսթիւն և ահա զօրապետի ձայնը պատուեր արձակեց.

«Մէկ, երկու, երեք չորս հինգ... վեց:»

Վերջին խօսքի վերայ ճռնչաց օդի մէջ հրացանների ձայնը և Վիկտոր դը-Վիլլարը գնդակահարուած երեսի վերայ գետին գլորուեց:

---

Գերմանիայի մեկուսացած մի բաղաքի մենաստանի մէջ ապրում էր մի կոյս, որի գեղեցիկ դէմքը և նուրբ շարժուածքները հիացնում էր նրան հանդիպողներին: Ոչ ոք չգիտէր նրա կեանքը և ոչ ոք չէր խօսում նրա անցեալի մասին: Բայց նրա սիրտը ճնշուած էր մի ծանր ցաւով, նրա վշտալի աչերը տեսնելիս ոչ ոք չէր հասկանում նրա կսկիծը: Նա կատարում էր իւր պաշտօնը, երբէք չէր տրտընջում, բայց գուցէ գիշերուան անքուն ժամերում նա աղօթում էր՝ մերձեցնել այն ժամը, երբ ինքը հանդիքնեալ կեանքում պէտք է հանդիպէր նրան, ով իւր կեանքը զոհեց իրան մատնող մի կնոջ:

Անգղ. թարգմ. Կ. Զ.

---